M A-S I S

ՄԱ-ՍԻՍ

N° 12

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, JENVIER– AOÛT 2012

ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, ՀՈՒՆՎԱՐ – ՕԳՈՍՏՈՍ 2012

ARMÉNIE : BILAN 2011

En 2011, les conséquences de la crise mondiale sont toujours présentes dans ce pays en dépit d'une croissance modeste de 4,6 % par rapport à la période d'avant la crise. Le bilan de cette reprise partielle pourrait être considéré comme plutôt positif compte tenu du fait que la croissance concernait le secteur réel comme les productions industrielle et agricole et les services.

Malgré les difficultés, en 2011, le secteur industriel, dominé par la production minière, a enregistré une hausse de 14,1 % (8 % en 2010). Le volume de la production a atteint $2,8 Mrd, résultat sans précédent pendant la période postsoviétique. La production industrielle, qui a employé 16 % de la population active, a constitué 37,7 % du PIB. Seulement 18 % sont revenus à la construction toujours en perte de vitesse (–11,5 %) mais qui, à elle-seule, constituait un tiers du PIB avant la crise. La part du secteur des nouvelles technologies reste encore modeste (plus de 300 entreprises et 5 500 employés) mais en constante progression. 38 % de la population active a été impliquée dans la sphère des services qui a représenté 44,5 % du PIB. Avec quelque 758 000 touristes en 2011, le tourisme arménien a continué de progresser (+10,3 %). Plus de 800 000 visiteurs sont prévus pour 2012. Plusieurs importants projets sont en cours comme le développement de la station balnéaire de Djermouk ou le projet touristique de Tatev. Les prix élevés aussi bien des billets d'avion que des hôtels et la qualité des services encore peu élevée restent les freins principaux pour le développement du tourisme.

L'année 2011 a été déclarée comme l'année du développement de l'agriculture. Cependant, la part du secteur agricole, qui emploie presque la moitié de la population (46 %), n'a été que de 17,8 % dans le PIB en 2011. Après 15,7 % de réduction en 2010, ce secteur a enregistré une hausse de 14,1 %, ce qui est dû, en partie, aux tentatives du gouvernement de dynamiser l'agriculture (amélioration des souches de cultures et d'élevage par le biais des importations, encouragement à la création des entreprises agro-alimentaires, modernisation de l'équipement agricole).

ՀԱՅԱՍՏԱՆ՝ 2011 Թ. ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ

2011 թ., համաշխարհային ճգնաժամի հետևանքները դեռ իրենց զգացնել են տվել՝ չնայած 4,6 % համեստ աճին, եթե համեմատենք նախաճգնաժամային ժամանակի հետ: Այդ մասնակի աշխուժության արդյունքը ավելի շուտ կարելի է համարել դրական՝ հաշվի առնելով այն փաստը, որ աճն արձանագրվել է իրական ոլորտում, ինչպես, օրինակ, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունը, ծառայությունները:

Չնայած դժվարություններին, 2011 թ. արդյունաբերական ոլորտը, որի զգալի մասը կազմում է հանքարդյունաբերությունը, արձանագրել է 14,1 % (8 % 2010 թ.) աճ: Արտադրանքի ծավալը հասել է մինչև $2,8 մլրդ, որը հետխորհրդային ժամանակաշրջանի համար աննախադեպ արդյունք է: Արդյունաբերական արտադրությունը, որի մեջ ընդգրկված է գործունյա բնակչության 16 %-ը, կազմել է ՆՀԱ-ի 37,7 %-ը: Ծարունական անկում ապրող շինարարության կշիռը (–11,5 %) եղել է 18 %, որը ճգնաժամից առաջ ՆՀԱ-ի մեկ երրորդն էր կազմում: Նոր տեխնոլոգիաների մասնաբաժինը դեռ համեստ է (ավելի քան 300 ձեռնարկություն և 5 500 աշխատող), բայց կայուն զարգացման ճանապարհի վրա է: Գործունյա բնակչության 38 %-ն ընդ-գրկված է ծառայությունների ոլորտում, որը կազմում է ՆՀԱ-ի 44,5 %-ը: 2011 թ. ընդունելով ավելի քան 758 000 զբոսաշրջիկ, հայկական տուրիզմը շարունակել է զարգանալ (+10,3 %): 2012 թ. սպասվում է ավելի քան 800 000 այցելու: Իրականացման մեջ են բազմաթիվ կարևոր նախագծեր, ինչպես, օրինակ, առողջարանային քաղաք Ջերմուկի զարգացումը կամ Տաթևի տուրիստական համալիրի նախագիծը: Ինչպես ավիատոմսերի, այնպես էլ հյուրանոցների բարձր գները և մատուցվող ծառայությունների դեռ ցածր որակը տուրիզմի զարգացման գլխավոր արգելակներն են:

2011 թ. հայտարարվել էր գյուղատնտեսության զարգացման տարի: Այս բնագավառն ընդգրկում է բնակչության գրեթե կեսը (46 %): Չնայած դրան, 2011 թ. տվյալ ոլորտի մասնաբաժինը ՆՀԱ-ի մեջ եղել է ընդամենը 17,8 %: 15,7 % (2010 թ.) անկումից հետո այս բնագավառն արձանագրել է 14,1 % աճ, որը մասամբ պայմանավորված է գյուղատնտեսության խթանման կառավարության ջանքերով՝ մշակաբույսերի և անասնաբուծական ցեղատեսակների բարելավում՝ ներմուծումների շնորհիվ, ագրոպարենային ձեռնարկությունների ստեղծման խրախուսում, գյուղատնտեսական սարքավորումների արդիականացում:

Չնայած այն փաստին, որ արտահանման աճը ($1,33 մլրդ կամ 24 % աճ) երեք անգամով գերազանցել է ներմուծման ցուցանիշը ($4,15 մլրդ կամ 8,9 % աճ), առևտրային դեֆիցիտը մնացել է զգալի՝ $–2,82 մլրդ: Հայաստանի արտահանման (որը պետք է կրկնապատկվի մինչև 2015 թ.) հիմնական ուղղություններն են եղել Ռուսաստանը (16,4 %), Գերմանիան (12,1 %), Բուլղարիան (11,7 %), Հոլանդիան (9 %), Իրանը (8,3 %) և ԱՄՆ-ը (7,8 %): Քիչ դիվերսիֆիկացված արտահանման առյուծի բաժինն ընկել է արդյունաբերական արտադրանքին (մետաղներ, հղկած ադամանդ) և, ավելի համեստորեն, մթերային ապրանքներին (մասնավորապես, ոգելից խմիչքներին) և էլեկտրաէներգիային: Հայաստանը հիմնականում ներմուծումներ է կատարել Ռուսաստանից (16 %), ԱՄԷ-ից (9,4 %), Վրաստանից

En dépit du fait que la progression des exportations ($1,33 Mrd soit une hausse de 24 %) a été presque trois fois plus élevé que celle des importations ($4,15 Mrd soit une hausse de 8,9 %), le déficit commercial est resté très important : $–2,82 Mrd. Les principaux pays de destination des exportations arméniennes, qui devraient doubler d'ici 2015, ont été : la Russie (16,4 %), l'Allemagne (12,1 %), la Bulgarie (11,7 %), les Pays-Bas (9 %), l'Iran (8,3 %) et les États-Unis (7,8 %). La part du lion des exportations peu diversifiées est revenue aux produits de la production industrielle (métaux, diamants taillés) et, dans une moindre mesure, aux produits alimentaires (notamment les boissons alcoolisés) et à l'énergie. Les principaux pays importateurs en Arménie ont été : la Russie (16 %), les EAU (9,4 %), la Géorgie (6 %), l'Iran (5,5 %), la Chine (5,1 %) et la Turquie (4,8 %). Les importations ont essentiellement concerné les hydrocarbures, le tabac, les produits alimentaires et les diamants. Quant aux investissements directs étrangers en 2011, ils ont essentiellement concerné les secteurs minier, de télécommunications, de production et de distribution d'électricité, de gaz et d'eau.

Comme dans le passé, l'économie arménienne reste excessivement tributaire de la demande extérieure (marché mondial de produits miniers), de l'aide extérieure (FMI, BM, BERD, Russie) et des transferts en provenance de l'étranger (Russie, diaspora). Ces derniers se sont élevés $1,96 Mrd (20,5 % de plus par rapport à 2010), dont $1,36 Mrd en provenance de Russie, alors que le budget national du pays a été de $2,55 Mrd. La dette d'État a été à hauteur de $4,137 Mrd (40,2 % du PIB) dont $3,568 Mrd de dette extérieure soit 8 % de hausse en 2011. Le PIB par habitant en 2011 a été à hauteur de $5 395 (112e rang mondial). Malgré une croissance positive, la pauvreté a progressé touchant 36 % de la population. Le taux de chômage officiel de 5,9 % (janvier 2012) reste largement sous-estimé.

Les quelques améliorations structurelles au niveau économique ont en partie libéralisé le champ législatif de création des PME et d'obtention des permis de construire. Cependant, le pays reste classé en 153e positions (sur 187 pays) quant à l'efficacité de l'administration fiscale. Dans la dernière classification de compétitivité des pays de WEF, l'Arménie occupe la 92e (98e en 2010) place sur 139 pays. Le déficit budgétaire a été de 11,6 % (revenus – $2,28 Mrd, dépenses – $2,57 Mrd) soit 3,1 % du PIB.

La dépendance envers le « grand frère » russe est restée forte en matière d'investissements, d'exportations et de transferts d'argent. La Russie est le premier partenaire commercial et le premier investisseur étranger. En un an les échanges arméno-russes ont augmenté de 16 % dépassant le seuil d'un milliard de dollars. De 1988 jusqu'à 2011, les investissements cumulés russes en Arménie ont atteint $2,8 Mrd soit environ 60 % du total des investissements étrangers en Arménie. Un autre projet important est le remplacement de la centrale nucléaire de Metzamor par une nouvelle à l'aide de Moscou. En 2011, les importations de la Russie vers l'Arménie sont composées de : matières premières (39,6 %), de produits agricoles et alimentaires (22,2 %), métaux et produits à base de métaux (machines, équipements, moyens de transport) (7,4 %), pierres et métaux précieux (7 %), produits chimiques (5 %). En 2011, la répartition des exportations de l'Arménie vers la Russie a été la suivante : produits agricoles et alimentaires (69 %), pierres et métaux précieux et dérivés (14,2 %), machines, équipements et moyens de transport (6,4 %), textile et chaussures (1,8 %), produits chimiques (1,5 %).

En ce qui concerne la vie politique intérieure, les partis politiques traditionnels sont toujours restés impopulaires et cela depuis les élections contestées de 2008. L'opposition n'a pas réussi à garder l'activisme de la population contestataire et elle a

(6 %), Իրանից (5,5 %), Չինաստանից (5,1 %) և Թուրքիայից (4,8 %)։ Ներմուծումների մեծ մասը կազմել են ածխաջրածնային վառելիքները, ծխախոտը, մթերքը և ադամանդը։ 2011 թ. արտասահմանյան ուղղակի ներդրումները հիմնականում կատարվել են հանքարդյունաբերության ու հեռահեռարձակման ոլորտներում, էներգիայի, գազի և ջրի արտադրանքի և բաշխման բնագավառում։

Ինչպես անցյալում, Հայաստանի տնտեսությունը մնում չափազանց կախված վիճակում արտաքին պահանջարկից (հանքարդյունաբերական ապրանքների համաշխարհային շուկա), արտաքին օգնությունից (ՄԱՀ, ՀԲ, ԵԶՎԲ, Ռուսաստան) և արտասահմանից (Ռուսաստան, սփյուռք) եկող դրամական փոխանցումներից։ Բանկային փոխանցումները կազմել են $1,96 մլրդ (20,5 % ավելի, քան 2010 թ.), որից $1,36 մլրդ եկել է Ռուսաստանից, այն դեպքում, որ երկրի ազգային բյուջեն եղել է $2,55 մլրդ։ Հայաստանի պետական պարտքը հասել է $4,137 մլրդ (ՆՀԱ-ի 40,2 %-ը), որից $3,568 մլրդ կազմել է արտաքին պարտքը, այսինքն 2011 թ. այն 8 %-ով աճել է։ 2011 թ. մեկ շնչին ընկնող ՆՀԱ-ը կազմել է $5 395 (աշխարհում 112-րդ տեղը)։ Չնայած դրական աճին, աղքատության ցուցանիշն էլ ավելի է բարձրացել և վերաբերում է արդեն բնակչության 36 %-ին։ Պաշտոնապես գործազուրկների քանակը կազմում է 5,9 % (2012 թ. հունվար), որը սակայն չափազանց թերագնահատված է։

Տնտեսության մեջ որոշ կառուցվածքային բարելավումներ մասամբ ազատականացրել են փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և կառուցելու թույլտվության ձեռքբերման օրենսդրական դաշտը։ Սակայն, հարկային կառավարման արդյունավետությամբ երկիրը զբաղեցնում է 153-րդ հորիզոնականը (187 պետությունների շարքում)։ Երկրների մրցունակության ՄԱՀ-ի վերջին դասակարգման մեջ Հայաստանը զբաղեցնում է 92-րդ տեղը (98-րդը՝ 2010 թ.)՝ 139 երկրների շարքում։ Բյուջեի դեֆիցիտը կազմել է 11,6 % (եկամուտ՝ $2,28 մլրդ, ծախս՝ $2,57 մլրդ) կամ ՆՀԱ-ի 3,1 %-ը։

Կախվածությունը ռուս «մեծ եղբորից» մնում է կայուն՝ ներդրումների, արտահանումների և դրամական փոխանցումների առումով։ Ռուսաստանը Հայաստանի առաջին առևտրական գործընկերն է և առաջին արտասահմանյան ներդրողը։ Մեկ տարում հայ-ռուսական ապրանքափոխանակությունն ավելացել է 16 %-ով՝ անցնելով մեկ միլիարդ ամերիկյան դոլլարի սահմանագիծը։ 1988 թ. մինչև 2011 թ. ռուսական կուտակված ներդրումները հասել են $2,8 մլրդ, որը կազմում է Հայաստանում ընդհանուր արտասահմանյան ներդրումների մոտ 60 %-ը։ Մյուս կարևոր նախագիծը Մոսկվայի օգնությամբ Մեծամորի ատոմակայանի փոխարինումն է՝ նորով։ 2011 թ. ռուսական արտահանումները դեպի Հայաստան բաղկացած են եղել հումքից (39,6 %), գյուղատնտեսական և մթերային ապրանքներից (22,2 %), մետաղներից և մետաղյա ապրանքներից՝ հաստոցներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ (7,4 %), թանկարժեք քարերից ու մետաղներից (7 %), քիմիական արտադրանքից (5 %)։ 2011 թ. Հայաստանը Ռուսաստան է արտահանել գյուղատնտեսական և մթերային ապրանքներ (69 %), թանկարժեք քարեր և մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (14,2 %), հաստոցներ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ (6,4 %), տեքստիլ և կոշկեղեն (1,8 %), քիմիական ապրանքներ (1,5 %)։

commencé à se diviser. L’année 2011 a également été marquée par l’activisme des jeunes opposants dans la lutte pour les libertés fondamentales, contre les inégalités sociales et l’arbitraire juridique, tout comme celui des défenseurs de la nature contre son exploitation excessive à des fins industrielles et celui des parents des soldats contre la violence dans l’armée. Quant à l’émigration, un vrai fléau pour l’Arménie, elle n’a pas été stoppée. Plus de 43 000 personnes auraient émigré du pays en 2011.

La politique extérieure a été marquée par le rejet, sous la pression de la diaspora et de la société civile et à cause de la politique controversée de la Turquie et de l’Azerbaïdjan, des « protocoles » arméno-turcs et par l’abandon de la politique de concessions dans la question du Karabakh. Ce sont l’impasse des rapports avec la Turquie et les tensions dans les rapports russo-géorgiens qui ont catalysé le processus de quête de voies de désenclavement alternatives. Les négociations avec l’Iran pour la construction du chemin de fer reliant les deux pays et des chantiers régionaux en cours comme la construction de l’autoroute reliant l’Arménie à la mer Noire via la Djavakhétie et l’autoroute internationale Nord-Sud en sont la preuve.

Les mesures d’assainissement et de modernisation de l’économie nationale entreprises par le gouvernement restent insuffisantes pour garantir une croissance durable à moyen terme. Il a y a encore beaucoup à faire pour accroître la compétitivité de l’économie, combattre les pratiques oligopolistiques et diversifier les exportations. Hormis le manque de compétitivité, les autres faiblesses de l’économie arménienne demeurent toujours son enclavement, sa dépendance de l’aide extérieure, son caractère oligarchique, les multiples problèmes structurels, la corruption, la faible diversification de ses exportations ainsi que la dépendance de l’industrie de la conjoncture internationale.

Garik Galstyan

TIGRAN KHZMALYAN : POURVOYEUR DE LA VÉRITÉ

Pour marquer le début de cette année 2012, nous avons décidé, le 8 janvier, d’organiser un goûter pour les petits et grands après les cours d’arménien. Suite à la diffusion de quelques chansons de la chanteuse Taline pour les plus petits, nous avons partagé les gâteaux des mamans. Puis nous avons offert aux enfants des sachets avec des fruits secs, des oranges et de petits cadeaux de Noël fournis par Siranouche Babikian. Enfin, pour les grands, a été diffusé le film de Tigran Khzmalyan *Sardarapat déjà vu*. Pour cela, nous avons utilisé le matériel acheté par l’association. La salle a été préparée par nos soins et KarenMkhitaryan a réglé le matériel vidéo. Au total, une trentaine d’adultes et une vingtaine d’enfants ont été présents à cette première manifestation de la nouvelle année.

* * * * * *

Ինչ վերաբերում է ներքին քաղաքական կյանքին, ավանդական քաղաքական կուսակցությունները, 2008 թ. վիճարկելի ընտրություններից ի վեր, շարունակել են մնալ հեղինակազուրկ: Ընդդիմությանը չհաջողվեց պահպանել բողոքարկող ժողովրդական զանգվածների ակտիվությունը և նա սկսեց տրոհվել: 2011 թ. նաև աչքի է ընկել երիտասարդ ընդդիմադիրների պայքարի ակտիվությամբ՝ հանուն հիմնարար ազատությունների, և սոցիալական անհավասարությունների ու դատաիրավական ապօրինությունների դեմ: Նույնը կարելի է ասել բնապահպանների պայքարի ձևերի ակտիվության, ինչպես նաև զինվորների ծնողների պայքարի մասին՝ նկատի ունենալով արդյունաբերական նպատակներով բնության ծայրահեղ շահագործումը և բանակում տեղի ունեցող բռնությունները: Ինչ վերաբերում է Հայաստանի համար իսկական աղետ դարձած արտագաղթին, ապա նրա հոսքը չի դադարել: 2011 թ. ավելի քան 43 000 մարդ արտագաղթել է երկրից:

Արտաքին քաղաքականությունը նշանավորվել է սփյուռքի ու քաղաքացիական հասարակության ճնշման ներքո և Թուրքիայի ու Ադրբեջանի իրարամերժ քաղաքականության հետևանքով հայ-թուրքական պայմանագրերի մերժումով և ղարաբաղյան հարցում զիջողական քաղաքականությունից հրաժարվելով: Թուրքիայի հետ հարաբերությունների փակուղին և ռուս-վրացական առնչությունների լարվածությունը խթան հանդիսացան ապաշրջափակման այլընտրանքային ճանապարհներ որոնելու գործում: Իրանի հետ բանակցությունները շարունակվել են՝ կապված երկու երկրները միացնող երկաթգծի կառուցման և տարածաշրջանային այլ ընթացիք կառույցների հետ: Հայաստանը՝ Ջավախքով Սև ծովին միացնող և Հյուսիս-Հարավ միջազգային ավտոմայրուղիների շինարարությունները դրա վառ ապացույցն են:

Ազգային տնտեսության առողջացման և արդիականացման կառավարության կողմից ձեռնարկած միջոցները մնում են անբավարար միջնաժամկետ ապագայում տևական աճ ապահովելու համար: Դեռ շատ անելիք կա տնտեսության մրցունակությունը ուժեղացնելու, օլիգոպոլիստական պրակտիկայի դեմ պայքարելու և արտահանումների բազմազանություն ապահովելու գործում: Բացի մրցունակության պակասից, հայկական տնտեսության մյուս թույլ կողմերն են նրա օլիգարխիկ բնույթը, տևականորեն շրջափակված լինելը, կախվածությունն արտաքին օգնությունից, բազմաթիվ կառուցվածքային խնդիրները, կոռուպցիան, արտահանումների սակավ բազմազանությունը, ինչպես նաև արդյունաբերության կախվածությունը միջազգային իրավիճակից:

Գարիկ Գալստյան

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎԸ՝ ՏԻԳՐԱՆ ԽԶՄԱԼՅԱՆ

Նոր՝ 2012 թ. նշելու համար որոշեցինք հունվարի 8-ին՝ հայերենի դասերից հետո, փոքրերի ու մեծերի համար կազմակերպել համտեսում: Ամենափոքրերի համար երգչուհի Թալինի մի քանի տեսահոլովակների ցուցադրումից հետո ճաշակեցինք մեր կանանց թխած խմորեղենը: Այնուհետև երեխաները ստացան տոպրակներ՝ չոր մրգերով, նարնջով և փոքրիկ սուրբծննդյան նվերներով, որոնք Սիրանուշ Բաբիկյանի ընծաներն էին փոքրիկներին: Վերջապես, մեծերի համար ցուցադրվեց Տիգրան Խզմալյանի «Սարդարապատ դեժա վյու» վավերագրական ֆիլմը, որի համար օգտագործեցինք միության միջոցներով գնված սարքավորումը: Սեփական ուժերով նախապատրաստեցինք կինոսրահը, իսկ Կարեն Միխիթարյանը կարգավորեց վիդեոսարքավորումը: Ընդհանուր առմամբ, երեսունից ավել մեծահասակ և քսան փոքրեր ներկա եղան տարեսկզբի այս անդրանիկ միջոցառմանը:

* * * * * *

Une des pages les plus sombres de l’histoire du peuple arménien s’est déroulée dans les années 1918-20 qui, par le triste concours de circonstances et de coïncidences correspondent à la période de l’existence de la première République d’Arménie pendant seulement deux ans et demi. En dépit de cela, cet instant de l’histoire a vraiment généré plus de commentaires discutables et contradictoires que n’importe quelle autre date de notre histoire millénaire. En sortant son film documentaire *Sardarapat déjà vu*, le cinéaste Tigran Khzmalyan a fait un nouvel exploit créateur. Il a essayé de trouver des réponses justes et crédibles aux questions concernant cette période tourmentée, et de les offrir au spectateur avide de vérité. Les membres de l’association *Ararat* de Lille ont été parmi ces heureux spectateurs. Après les cours d’arménien du dimanche, les parents et leurs enfants ont pu assister à la projection de ce film de valeur, qui nous est parvenu à l’initiative et grâce aux efforts de Garik Galstyan, enseignant de l’Université de Lille3 et membre actif de l’association *Ararat*.

À l’écran nous avons les annales de cette période (voire la chronique au jour le jour pour être plus exacte) à la fois héroïque et tragique de notre histoire. Nous revivons et revalorisons une nouvelle fois cet instant sanglant de la rébellion héroïque et de la lutte de notre âme éprise de liberté qui, hélas, n’a mené nulle part. Sardarapat-Bach Aparan-Karakilissa, les abords de Lori-Tiflis, le Zanguézour – une poignée, un pouce d’Arménie gagnés, mais au bout du compte Kars, Sarighamich, Sourmalou, le Karabakh, le Nakhidjévan perdus… Des victoires obtenues avec la dernière goutte de sang et, en contrepartie, de grandes pertes irréversibles à cause de l’incapacité (ou de la préméditation ?) de la diplomatie arméno-russo-soviétique.

Et où en est-on avec le facteur bolchévico-communiste ? Quand l’armée arménienne affamée, fatiguée, mais avec un enthousiasme retrouvé gagnait des batailles sur les fronts ouverts par ses voisins haineux (excepté du côté perse, toutes les frontières de l’Arménie ont été transformées en lignes de front), les communistes, pendant le mois de nos victoires, ont enfoncé le traitre poignard du mois de mai dans le dos de notre armée qui luttait pour son peuple. Ils ont ainsi créé un front intérieur honteux.

Pendant 70 ans, l’idéologie soviétique a habillement fait oublier les faits historiques et diffuser une histoire inventée et falsifiée. Heureusement, ces dernières décennies beaucoup de choses ont été remises à leur place. Le mérite de Tigran Khzmalyan est considérable dans cette digne affaire dont la preuve intangible est ce film. T. Khzmalyan est considéré comme un réalisateur doté de nombreuses qualités, pourvoyeur de la vérité, au nom de laquelle quelques une de ses œuvres ont été censurées jusqu’à ces derniers temps.

Հայ ժողովրդի պատմության ամենամութ էջերից են 1918-20 թվականները, որոնք դժբախտ պատահականությամբ և զուգադիպությամբ համընկնում են Առաջին հանրապետության ժամանակաշրջանին՝ ընդամենը երկուսուկես տարի: Բայց արի ու տես, որ պատմության այդ ակնթարթը հիրավի շատ ավելի իրարամերժ ու հակասական մեկնաբանություններ ունի, քան հազարամյակների մեր պատմության որևէ հանգրվան: Էկրան բարձրացնելով «Սարդարապատ դեժա վյու» վավերագրական կինոնկարը՝ բեմադրիչ Տիգրան Խզմալյանն իր հերթական ստեղծագործական սխրանքն է կատարել: Նա փորձել է այդ խառնակ ժամանակներին վերաբերող հարցերին արդար ու արժանահավատ պատասխաններ գտնել ու դրանք մատուցել ճշմարտության կարոտ հանդիսատեսին: Լիլի «Արարատ» միության անդամներն այդ երջանիկ հանդիսատեսներից էին: Կիրակնօրյա հայերեն դպրոցի դասերից հետո երեխաների և ծնողների համար ցուցադրվեց այդ արժեքավոր ֆիլմը, որն այստեղ է հասել Լիլ3 համալսարանի դասախոս և «Արարատ» միության ակտիվ անդամ Գարիկ Գալստյանի նախաձեռնությամբ ու ջանքերով:

Էկրանին է մեր պատմության և՛ հերոսական, և՛ ողբերգական ժամանակի տարեգրությունը (ճիշտ կլիներ՝ օրագրությունը), վերստին վերապրում-վերագնահատում ենք հայ ազատատենչ ոգու մաքառումների ու հերոսական ընդվզումների արյունաթաթավ ընթացքը, որոնք, ավա՛ղ, հանգում են վասն ոչնչի: Սարդարապատ-Բաշ Ապարան-Ղարաքիլիսա, Լոռի-Թիֆլիսի մատույցներ, Զանգեզուր... բայց ի վերջո՝ կորուսյալ Ղարս, Սարիղամիշ, Սուրմալու, Ղարաբաղ, Նախիջևան և մի բուռ-մի թիզ Հայաստան... Արյան վերջին կաթիլով հաղթանակներ և ... մեծ ու անդառնալի կորուստներ այդ հաղթանակների դիմաց՝ հայ-ռուս-խորհրդային դիվանագիտության անճարակության (թե՞ դիտավորության) պատճառով:

Իսկ բոլշևիկյան կոմունիստական գործո՞նը: Երբ սովալլուկ, հոգնատանջ, բայց վերագտած ոգևորությամբ հայոց բանակը հաղթանակներ էր տանում ոխերիմ հարևանների բացած ճակատներում (Հայաստանի ամբողջ սահմանը, Պարսկաստանից բացի, ճակատ էր), կոմունիստները մեր հաղթանակների ամսում մայիսյան դավադրական դաշույնը խրեցին իրենց ազգի մարտնչող բանակի թիկունքին՝ ստեղծելով ամոթալի ներքին ճակատը:

Խորհրդային գաղափարախոսությունը 70 տարի հմտորեն մոռանալ էր տալիս պատմական փաստերը և տարփողում էր կեղծած շինծու պատմություն: Բարեբախտաբար վերջին տասնամյակներին ամեն ինչ մասամբ իր տեղն է դրվում: Այս շնորհակալ գործում զգալի է Տիգրան Խզմալյանի վաստակը, որի անվիճելի ապացույցն է այս ֆիլմը: Խզմալյանն ընդհանրապես բազմաճյուղ հետաքրքրությունների տեր հեղինակ է, ճշմարտաբան, ինչի պատճառով էլ նրա մի շարք գործեր արգելքի տակ էին մինչև վերջերս:

Lors du goûter après la diffusion des chansons de Taline pour les petits
Համտեսում՝ փոքրերի համար Թալինի տեսահոլովակների ցուցադրումից հետո

Karen Mkhitryan règle le matériel vidéo dans la salle préparée par nos soins
Կարեն Մխիթարյանը կարգավորում է սարքավորումը մեր նախապատրաստած կինոսրահում

Philologue de formation, titulaire d'un doctorat ès lettres, auteur d'un livre poétique, T. Khzmalyan s'oriente vers le cinéma et à *Mosfilm* termine des cours de metteur en scène avec G. Tchoukhraï. Puis, à court terme, il devient téléreporteur en Arménie et au Karabakh et cummule différentes fonctions dans les organisations internationales. Mais sa mission était prédestinée et c'était le cinéma. Il a mis en scène et réalisé cinq films long métrage et douze documentaires dont une partie est devenue accessible aux amateurs de cinéma récemment.

L'association *Ararat* et la communauté arménienne de Lille qui se réunit autour d'elle souhaitent de nouveaux succès à cet auteur en quête permanente et attendent de lui de nouveaux films révélateur de vérité.

Manvel Margaryan
membre de l'Union des journalistes d'Arménie

Կրթությամբ բանասեր, բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծական գրքի հեղինակ Խզմալյանը շրջադարձ է կատարում դեպի կինոն, ավարտում «Մոսֆիլմ»-ի Գ. Չուխրայի բարձրագույն ռեժիսորական դասընթացը: Այնուհետև Հայաստանում և Արցախում կարճ ժամանակ զբաղվում է հեռուստալրագրությամբ, պաշտոնավորում միջազգային կազմակերպություններում: Բայց նրա առաքելությունն ի վերուստ տրված էր. դա կինոն էր: Նա բեմադրել և նկարել է հինգ գեղարվեստական և տասներկու վավերագրական ֆիլմեր, որոնց մի մասը նոր-նոր է հասնում կինոդիտողին:

«Արարատ» միությունն ու նրա շուրջ հավաքված հայ համայնքը նորանոր հաջողություններ է մաղթում պրպտող հեղինակին և ակնկալում նոր ճշմարտապատում կինոնկարներ:

Մանվել Մարգարյան, Հայաստանի լրագրողների միության անդամ

MON ÂME EST TOUJOURS AU KARABAKH

Laetitia Blancher n'est ni photographe ni ethnologue. Malgré cela, elle s'est mise à son œuvre avec l'observation délicate d'une photographe et la clairvoyance d'une ethnologue. Elle a saisi des images magnifiques du Karabakh, une épopée photographique concernant la vie et le quotidien d'après la guerre du peuple héroïque d'Artsakh.

L'exposition qui a été présentée pendant trois mois à partir du 3 janvier 2012 dans le vaste hall de la médiathèque de la ville d'Arques, a plus particulièrement attiré l'attention des visiteurs français, parce que seulement trois Arméniens de Lille se sont déplacés pour assister à cette inauguration.

Dans le cadre de programmes humanitaires et culturels, Laetitia a séjourné au Karabakh en 2009 et 2010. Elle a voyagé pen-dant quelques mois dans les districts et villages de la deuxième République arménienne. Elle a fait connaissance et s'est liée avec des habitants de cette région, a étudié leur caractère, leur mode de vie quotidien. À l'initiative de l'association *Narekatsi*, elle a donné des cours de graphisme à des enfants de 6 à 18 ans.

La plaquette de la visite s'intitule : « Entre l'Arménie et l'Azerbaïdjan ». Sur sa première page figure la carte de l'Arménie et du Haut-Karabakh entourés des pays frontaliers. Puis l'auteur présente brièvement l'histoire de cette république et s'exprime avec une admiration non dissimulée pour les Artsakhtsi. Comme l'a fait remarqué Laetitia, les habitants du Karabakh vivent avec les difficultés d'après-guerre mais ne sont jamais découragés, ils sont hospitaliers et familiers. Le café, le thé au thym, la vodka, le yaourt local, les confitures domestiques, le lavache, les légumes des jardins adjacents à la maison – tout cela ne manque jamais sur des tables hospitalières. Il faut ajouter également la chaleur et l'attitude bienveillante de la population.

Ce sont ces contacts qui ont poussé Laetitia à apprendre à parler peu à peu l'arménien. C'est cette ouverture et ce partage exceptionnel qui lui ont permis de considérer plus tard que dans ses veines elle pourrait également avoir du sang arménien. Il est possible que ce soit cela qui a été le moteur interne qui a conduit

ԵՍ ՄԻՇՏ ՀՈԳՈՎ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԵՄ

Լեթիսիա Բլանշեն մասնագիտությամբ ոչ լուսանկարիչ է, ոչ էլ ազգագրագետ: Բայց լուսանկարչի նուրբ դիտողականությամբ և ազգագրագետի խորաթափանցությամբ է ձեռնամուխ եղել իր ձեռնարկած գործին՝ ստեղծելով ղարաբաղյան հիասքանչ բնապատկերներ, Արցախի հերոսական ժողովրդի հետպատերազմյա կյանքն ու կենցաղը պատկերող լուսանկարչական շարքը:

Ցուցահանդեսը, որը հունվարի 3-ից սկսած երեք ամիս ներկայացվեց Արք քաղաքի գրադարանի ընդարձակ ճեմասրահում, հիրավի գրավեց ֆրանսիացի այցելուներին: Հատուկ ընդգծում եմ ֆրանսիացի գրասերներին, քանզի ցուցահանդեսի բացմանը ներկա էին ընդամենը երեք լիլահայեր:

Հումանիտար և մշակութային ծրագրերի շրջանակներում 2009-ին և 2010-ին լինելով Արցախում՝ Լեթիսիան մի քանի ամիսների ընթացքում շրջագայել է հայկական երկրորդ հանրապետության շրջաններում և գյուղերում, ծանոթացել ու բարեկամացել տեղի բնակիչների հետ, ուսումնասիրել նրանց բնավորությունը, նիստ ու կացը: «Նարեկացի» արվեստի միության նախաձեռնությամբ նա գրաֆիկայի դասեր է տվել 6-18 տարեկան երեխաներին:

«Հայաստանի և Ադրբեջանի միջև». այսպես է կոչվում ինֆորմացիոն այցեգրքույկը, որի առաջին էջում տարածաշրջանի քարտեզն է՝ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը՝ շրջապատված սահմանակից երկրներով: Այնուհետև հեղինակը ներկայացնում է հանրապետության հակիրճ պատմությունը, անթաքույց հիացմունքով արտահայտվում արցախցիների մասին: Ինչպես նկատել է Լեթիսիան, ղարաբաղցիներն ունեն հետպատերազմական դժվարություններ, բայց երբեք չեն ընկճվում, նրանք անչափ հյուրասեր են, մարդամոտ: Սուրճ, ուրցով թեյ, օղի, մածուն, տնական մուրաբաներ, լավաշ, տնամերձ այգու բանջարեղեն. հյուրասիրության սեղանից անպակաս այս ամենին գումարվում էր նրանց ջերմությունը, բարյացակամ վերաբերմունքը:

L'exposition commence par une présentation de livres sur l'Arménie
Ցուցահանդեսի մուտքն սկսվում էր Հայաստանին նվիրված գրքերի տաղավարով

Laetitia au Karabakh. Ici elle a vu, a fait connaissance, a admiré et a transmis aux photos ses impressions qui ont été partagées avec générosité avec les visiteurs de l'exposition.



Tout cela a été évoqué par la conservatrice de la médiathèque Lucie Milaret qui a mis à disposition son foyer hospitalier pour accueillir cette exposition intime. Celle-ci commence par une présentation de livres sur l'histoire de l'Arménie, la Grande catastrophe, des albums, d'un recueil de contes arméniens.

Les visiteurs ont montré un intérêt inépuisable sur l'exposition. Surprenante à l'entrée, la musique traditionnelle arménienne, diffusée dans le hall, complétait et rendait davantage compréhensibles les images. Une série de vues urbaines, des portraits d'*Artsakhtsi*, des épisodes de la vie quotidienne, des paysages, des cordes chargées de vêtements lavés en toutes saisons de l'année, des trous et des déformations des routes, des dizaines d'images de vie sont des témoins parlants de l'Artsakh, des combats et du mode de vie de son peuple.

En remerciant de l'intérêt porté à son travail photographique, la lilloise Laetitia a dit que par son âme elle était toujours au Karabakh, avec les *Artsakhtsi* et, si l'occasion se présentait, elle y repartirait sans hésitation avec la certitude qu'elle serait de nouveau reçue avec chaleur.

Jacqueline Kasparian

La charmante Laetitia Blancher Հմայիչ Լեթիսիա Բլանշեն

Այս ամենի արդյունքը եղավ այն, որ Լեթիսիան կամաց-կամաց սովորեց հայերեն խոսել: Նրա պատրաստակամությունը և այլոց հոգսերով ապրելու բացառիկ ունակությունը ստիպեցին խոստովանել, որ իր երակներում, հնարավոր է, հայի արյուն է հոսում: Գուցե սա էր ներքին այն շարժիչը, որը նրան հասցրեց Ղարաբաղ: Այստեղ նա տեսավ, ծանոթացավ, հիացավ և լուսանկարներին հանձնեց իր տպավորությունները, որոնք մեծահոգաբար փոխանցեց ցուցահանդեսի այցելուներին:

Jacqueline Kasparian et Manvel Margaryan prennent l'intervew chez Laetitia
Ժ. Կասպարյանն ու Մ. Մարգարյանը Լեթիսիայի հետ հարցազրույցի ժամանակ

Այս ամենի մասին խոսեց նաև գրադարանի տնօրեն Լյուսի Միլարեն, ով մեծ պատրաստակամությամբ տրամադրել էր իր հյուրընկալ օջախը այդ գողտրիկ ցուցահանդեսին, որի մուտքն սկսվում էր գրական մի մեծ ռաղավար, ուր ներկայացված էին Հայաստանի պատմությանը և Մեծ եղեռնին նվիրված գրքեր, ֆոտոալբոմներ, հայկական հեքիաթների ժողովածու:

Այցելուներն անսպառ հետաքրքրություն ցուցաբերեցին ցուցահանդեսի նկատմամբ: Ուշագրավ է, որ ճեմասրահում հնչում էր հայկական ժողովրդական երաժշտություն, որն ասես ամբողջացնում էր ու ավելի ըմբռնելի դարձնում պատկերները՝ քաղաքային տեսարանների շարք, արցախցիների դիմանկարներ, առօրյա դրվագներ, բնապատկերներ, տարվա տարբեր եղանակներին ձգված և լվացքի շորերով բեռնված պարաններ, ավտոճանապարհների դարուփոսեր, տասնյակ կենցաղային պատկերներ, որոնք խոսուն վկայություններ են Արցախի, նրա մարդկանց մաքառումների և կենսակերպի մասին:

Շնորհակալություն հայտնելով իր կատարած աշխատանքի հանդեպ ուշադրության համար՝ լիլաբնակ Լեթիսիան ասաց, որ միշտ հոգով Ղարաբաղում է, արցախցիների հետ և առիթի դեպքում առանց վարանելու կրկին կմեկնի այնտեղ այն ամուր հավատով, որ նորից ջերմ ընդունելության կարժանանա:

Ժակլին Կասպարյան

La conservatrice de la médiathèque Lucie Milaret ouvre l'exposition
Գրադարանի տնօրեն Լյուսի Միլարեն բացում է ցուցահանդեսը

DE LA DENTELLE ET DE L'ÉCUME DE MER POUR LA FÊTE DES FEMMES

Cela faisait quelques années que moi, l'ex-calaisienne, j'avais envie de faire découvrir le musée de la Dentelle de cette ville aux femmes arméniennes. L'occasion m'en fut donnée le 10 mars 2012 dans le cadre de notre sortie annuelle pour la Journée internationale des femmes.

Nous avons remplie deux voitures complètes et parcouru plus d'une centaine de kilomètres pour atteindre la Côte d'Opale. Une heure trente après nous débarquions à Calais dans ce beau musée de 2500 m² alliant une manufacture collective typique des années 1870 à un bâtiment ultra moderne dont la façade évoque les cartons permettant aux métiers à dentelle de reproduire les motifs imaginés par les esquisseurs de ces étoffes.

La guide, devant l'enthousiasme et l'intérêt des femmes arméniennes, a passé plus de deux heures à nous expliquer l'histoire de la dentelle à Calais. Des ouvrages à la main du Moyen Âge portés aussi bien par les femmes que les hommes de la noblesse en signe de richesse, aux dentelles fabriquées par les machines de nos jours, tout nous fut détaillés et montrés grâce à la richesse des collections du musée. À l'origine, le bâtiment ancien du musée regroupait 11 entreprises et 80 métiers à tisser la dentelle. Les multiples métiers de cette fabrication nous ont également été détaillés : de la conception des motifs de dentelle, à leur fabrication, à leur réparation, à leur coloration…

La salle des métiers à tisser fut certainement la plus impressionnante avec la mise en route d'une de ces machines, faisant vibrer le sol dans un grand fracas. Des échantillons qui sont sortis de cette mise en route ont été distribués aux jeunes filles qui nous accompagnaient. Je suis certaine que ceux-ci sont encore conservés même s'ils sont enduits de graphite, cette matière utilisée pour que le fil glisse mieux dans les rouages de la machine. Nous avons terminé par la salle d'exposition des vêtements de haute couture ou chacune d'entre nous a trouvé un modèle à son goût. Les noms des grands couturiers sonnent encore à nos oreilles : Dior, Channel, Paquin, Givenchy, Chantal Thomas…

Après la visite, nous nous sommes restaurées dans le grand centre commercial appelé « La Cité de l'Europe», puis le soleil nous ayant accompagné, nous avons fait une grande promenade à Wissant autour d'un lac, dans les dunes et le long de la mer, soit plus de cinq kilomètres à pied.

Cette escapade a plu à toutes, mamans et filles, un vrai moment de partage loin de nos soucis quotidiens. La ballade à pied a été plébiscitée et d'autres longues promenades en famille dans la région sont souhaitées.

Louisette Lamarche

Les Arméniennes de Lille à Wissant / Լիլահայ կանայք՝ Ուիսսանում

ԺԱՆՅԱԿԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԾՈՎԱՓ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Արդեն քանի տարի է, որ ես՝ նախկին կալեաբնակս, ցանկություն ունեի հայ կանանց օգնել բացահայտելու Կալեի Ժանյակի թանգարանը: Այդ հնարավորությունն ինձ տրվեց 2012 թ. մարտի 10-ին՝ Կանանց միջազգային օրվա առթիվ ավանդաբար կազմակերպվող միջոցառումների շրջանակներում:

Երկու լեփ-լեցուն ավտոմեքենաներով մեկ ու կես ժամում ավելի քան հարյուր կիլոմետր անցնելուց հետո հասանք Օպալի (Ծիածանաքարի) ափ և կանգ առանք 2500 քառ. մետր տարածք զբաղեցնող Կալեի այս գեղեցիկ թանգարանի հարևանությամբ: Այն ընդգրկում է 1870 թվականներին բնորոշ ֆաբրիկայի մասնաշենքը և գերժամանակակից մի շինություն, որի ճակատը հիշեցնում է ստվարաթղթերը, որոնցով ժանեկագործները վերարտադրում էին նկարիչների երևակայությունով ստեղծված գործվածքների մոտիվները:

Ի պատասխան հայ կանանց ոգևորության և հետաքրքրասիրության՝ զբոսավարը երկուս ու կես ժամից ավել մեզ պատմում էր Կալեի ժանեկագործության պատմությունը: Թանգարանի հարուստ հավաքածուների շնորհիվ մենք մանրամասնորեն ծանոթացանք միջնադարյան ձեռագործ հագուստների նմուշներին, որոնք հագնում էին ազնվական ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ ի նշան ունեվորության, և ժամանակակից մեքենաներով գործած ժանյակներին: Ի սկզբանե, թանգարանի այս հին շենքը իր ներսում համախմբել է 11 ձեռնարկություն և ժանյակներ գործելու 80 դազգահներ: Զբոսավարը մեզ մանրամասնորեն պատմեց այս արտադրության մեջ ներգրավված բազմաթիվ արհեստների մասին՝ կապված մոտիվների ստեղծման, դրանց իրագործման, վերականգնման, ներկման և այլնի հետ:

Գործելու դազգահների սրահն իրավամբ ամենատպավորիչն էր: Այստեղ գործածության մեջ դրվեց մեքենաներից մեկը, որից ամբողջ հատակը դղրդում էր: Դրանցից դուրս եկած նմուշները բաժանեցին մեր խմբի ամենաերիտասարդ աղջիկներին, ովքեր, ես համոզված եմ, շարունակում են դրանք պահել՝ չնայած գրաֆիտով ծածկված լինելուն, որն օգտագործվում է թելը դազգահի մասերով հեշտ անցկացնելու համար: Այցելությունն ավարտվեց հագուստի բարձր նորաձևության ցուցասրահում, որտեղ մեզանից յուրաքանչյուրը գտավ իր ճաշակին համապատասխան մոդել: Ճանաչված դերձակների անունները մինչև հիմա հնչում են մեր ականջներում՝ Դիոր, Շանել, Պակեն, Ժիվանշի, Շանտալ Տոմա և այլն:

Այցելությունից հետո ճաշեցինք «Եվրոպավան» կոչվող մեծ առևտրի կենտրոնում: Այնուհետև արևոտ եղանակը մեզ հուշեց կատարել երկարատև զբոսանք Ուիսսանի մոտ գտնվող լճի շուրջը և ծովափի երկայնքով ձգվող ավազաբլուրներում: Ընդհանուր առմամբ, մենք ոտքով քայլեցինք ավելի քան հինգ կիլոմետր:

Այս էքսկուրսիան բոլորին դուր եկավ՝ և՛ մայրերին, և՛ աղջիկներին: Սա համատեղ վայելքի, մտքերի փոխանակման մի անկրկնելի պահ էր՝ առօրյա հոգսերից հեռու: Ոտքով զբոսանքը բոլորի սրտով էր: Առաջարկներ եղան ապագայում, ընտանյոք հանդերձ, կազմակերպել երկարատև արշավներ մեր մարզի տարածքում:

Լուիզեթ Լամարշ

Հռիփսիմեն՝ դազգահների սրահում

Թանգարանի արտաքին տեսքը

DANSE ET DOMINOS POUR LE REPAS DE PÂQUES

Pour la fête de Pâques, nous avons décidé d'organiser un repas partagé dans la salle Pagnerre, allée du Trocadéro à Mons en Barœul, une salle que l'on connaissait déjà. Samvel nous a préparés du bon saumon et du riz traditionnel fourni, comme les boissons, par notre association. Au-delà, chaque fa-mille avait pour consigne d'apporter une salade ou un dessert. Résultat, une très belle table pour 80 convives (dont une trentaine d'enfants, deux Aixois, et notre sympathique photographe Laeti-tia Blancher), un nombre qui nous a agréablement surpris. Une grande télévision apportée par nos soins a fait l'ambiance en laissant tourner le spectacle *Ararat mon amour*, puis des dessins animés pour les petits.

Très vite les enfants sont partis à la recherche des œufs de Pâques dans le bois attenant à la salle. Ils se sont beaucoup amusés dans cet espace parfait pour eux.

Ceux qui ne participaient pas au tournoi de dominos, se sont livrés à des parties de nardi traditionnel / Դոմինոյին չմասնակցողները տրվեցին ավանդական նարդուն

Lors de nos permanences du dimanche, nous avions préalablement décidé de faire coïncider avec la fête un tournoi de dominos, jeu très populaire chez beaucoup de membres d'*Ararat*. Ce tournoi avait été envisagé lors de l'assemblée générale. Après avoir discrètement caché les œufs de Pâques dans la « forêt », les papas se sont donc lancés dans ce passionnant tournoi. Ceux qui ne participaient pas, se sont livrés à des parties de nardi traditionnel. Le final du tournoi a eu lieu après le repas. Les heureux gagnants ont été les deux Samvel et Haïk qui ont reçu des cadeaux préparés à cette occasion. Nous avons également décidé lors de cette manifestation d'organiser un tournoi de ping-pong dans les semaines qui suivraient. Notre secrétaire Karen M. s'en chargerait.

Lors du repas collectif de la fête de Pâques
Զատիկի տոնի համատեղ ճաշկերույթի ժամանակ

ՊԱՐԸ, ԴՈՄԻՆՈՆ ԵՎ ԶԱՏԻԿԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԸ

Զատիկի տոնի առթիվ որոշել էինք միացյալ ուժերով կազմակերպել ճաշկերույթ, որը տեղի ունեցավ Մոնս ան Բարոլի Տրոկադերո ծառուղում գտնվող մեզ արդեն ծանոթ «Պանիեր» սրահում: Սամվելը բրնձով համեղ սաղմոն էր եփել: Ըմպելիքների հետ բոլոր ծախսերն իր վրա էր վերցրել մեր միությունը: Սրանից բացի, յուրաքանչյուր ընտանիքի հանձնարարվել էր իր հետ բերել աղցան կամ անուշեղեն: Արդյունքում ունեցանք մի շատ գեղեցիկ սեղան՝ 80 հյուրի համար, որոնց մեջ էին երեսունից ավելի երեխա, երկու Էքս-ան-Պրովանսից ժամանած մեր հայրենակիցներ և հմայիչ լուսանկարչուհի Լեթիսիա Բլանշեն: Այսքան մարդու ներկայությունը մեզ համար հաճելի անակնկալ էր: Մեր նախաձեռնությամբ բերած մեծ հեռուստացույցով «Արարա՛տ, իմ սեր» ներկայացման ցուցադրումը ստեղծեց հաճելի մթնոլորտ: Իսկ փոքրերի համար ավելի ուշ ցուցադրվեցին մանկական շարժանկարներ:

Շուտով երեխաները գնացին սրահին հարակից անտառակում Զատկի ձվեր փնտրելու: Նրանք բավական զվարճացան իրենց համար հաճելի այս տարածքում:

Կիրակնօրյա հանդիպումների ժամանակ մենք կանխավ որոշել էինք Զատիկի տոնին համատեղել դոմինոյի մրցաշարը, խաղ, որը սիրում են «Արարատ»ի անդամներից շատերը: Սրա անցկացումը դեռ նախատեսվել էր տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ: Զատիկի ձվերը նախապես անտառում պահելուց հետո հայրերը ձեռնամուխ եղան այս «կրքոտ» մրցաշարին: Չմասնակցողները տրվեցին ավանդական նարդուն: Մրցաշարի եզրափակիչը տեղի ունեցավ ճաշից հետո, որի երջանիկ հաղթողները դարձան երկու Սամվելները և Հայկը, որոնք ստացան այս առիթով նախօրոք գնված նվերները: Այս միջոցառման անցկացման ընթացքում որոշում կայացվեց նաև մոտակա շաբաթներին կազմակերպել սեղանի թենիսի մրցաշար: Միության քարտուղար Կարեն Միխիթարյանը պետք է զբաղվեր դրանով:

Les heureux gagnants du tournoi de dominos ont été les deux Samvel et Haïk
Դոմինոյի մրցաշարի երջանիկ հաղթողները դարձան երկու Սամվելները և Հայկը

Ճաշից և հաղթողներին մրցանակներ շնորհելուց հետո սկսեցինք հայկական պարի առաջին դասը՝ Լուսինենի գլխավորությամբ: Որպես պար նա ընտրել էր ավանդական քոչարին: Նպատակն այն էր, որ մոտ տասնհինգ դասից հետո ներկայացնենք այդ պարը հուլիսի 15-ին Մոնս ան Բարոլի քաղաքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպված «Մշակույթների

Après le repas nous avons commencé notre premier cours de danse arménienne
Ճաշկերույթից հետո սկսեցինք հայկական պարի մեր առաջին դասը

Après le repas et la remise des prix aux gagnants, nous avons commencé notre premier cours de danse arménienne sous la direction de Louciné. Elle a choisi comme danse à apprendre un traditionnel kotchari. Le pari était, après une quinzaine de cours, de présenter cette danse lors de la manifestation « Rencontre des cultures » organisée le 15 juillet par la mairie de Mons en Barœul. Louciné a de suite compris l'ampleur de la tâche à accomplir pour arriver à nous faire tous danser en même temps et correctement. Ainsi, ce cours à été le premier d'une longue série qui nous conduirait sur scène. Mais cela est une autre aventure …

Louisette Lamarche

PREMIER TOURNOI DE TENNIS DE TABLE

À la dernière assemblée générale a été évoqué le souhait de pratiquer certains jeux et disciplines sportives sous formes de rencontres plus ou moins régulières. Le football, le volley et le ping-pong ont été cités. Après les tournois de nardis et de dominos de cet hiver, voici le premier tournoi de tennis de table. Il a eu lieu dans l'une des salles occupées par notre association à Mons en Barœul, sur deux demi-journées, les 10 et 17 juin 2012.

Le premier dimanche nous avions 4 groupes de 4 personnes, et chaque joueur du même groupe a fait une partie contre les trois autres. Les deux meilleurs de chaque groupe se sont donc qualifiés pour le 1/8e de final qui ont eu lieu l'après midi du 17 juin. Sachant que nous n'avions que deux tables de ping-pong et trois heures pour faire jouer les 16 participants, chaque vainqueur devait remporter deux jeux de 11 points.

De g. à d. : Les vainqueurs du tournoi : Achot Sahakyan (3e), Atom Davtyan (1er) et Karen Mkhitaryan (2e) / Ձ.՝ա. Մրցաշարի հաղթողները՝ Աշոտ Սահակյանը (3-րդ), Ատոմ Դավթյանը (1-ին) և Կարեն Մխիթարյանը (2-րդ)

C'était la dernière manifestation pour Tamar et Dikran Hanonik avec les Arméniens de Lille avant leur déménagement définitif à Lyon
Սա Թամար և Դիկրան Հանոնիկների վերջին միջոցառումն էր լիլահայերի հետ՝ Լիոն մշտապես տեղափոխվելուց առաջ

հանդիպում» միջոցառման ժամանակ: Լուսինեն միանգամից պատկերացրեց գալիք աշխատանքի ծավալը, որպեսզի բոլորը կարողանան միասնական և գեղեցիկ պարել: Այսպիսով, սա առաջինն էր նախատեսված պարի 15 դասերից, որոնք մեզ կբարձրացնեն բեմ: Բայց դա արդեն մի ուրիշ հետաքրքիր «արկածային» պատմություն է…

Լուիզեթ Լամարշ

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

Տարվա հաշվետու ժողովի ժամանակ ցանկություն էր հայտնվել հնարավորին չափ կանոնավոր հանդիպումներ կազմակերպել՝ խաղերով և մարզաձևերով զբաղվելու համար: Մարզաձևերից մասնավորապես նշվել էին ֆուտբոլը, վոլեյբոլը և սեղանի թենիսը: Անցած ձմեռվա՝ նարդու և դոմինոյի մրցաշարերից հետո հերթն այժմ հասավ սեղանի թենիսի մրցույթին: Այն տեղի ունեցավ 2012 թ. հունիսի 10-ին և 17-ին, օրվա երկրորդ կեսին, Մոնս ան Բարոլի քաղաքապետարանի մեր միությանը տրամադրած սրահներից մեկում:

Առաջին կիրակի օրը մենք կազմեցինք 4 հոգուց բաղկացած 4 խումբ և յուրաքանչյուր խմբի խաղացող պետք է մրցեր մյուս երեքի հետ: Խմբերի երկու լավագույնները այնուհետև անցնում էին 1/8 եզրափակիչ, որը տեղի ունեցավ հունիսի 17-ին՝ ճաշից հետո: Հաշվի առնելով այն փաստը, որ խաղալու համար 16 մասնակիցներն իրենց տրամադրության տակ ունեին միայն երկու թենիսի սեղան և մոտ երեք ժամ, հաջորդ փուլ անցնելու համար բավական էր 11 միավորով երկու հաղթանակ:

Մյուս կիրակի օրը մրցեցին առաջին փուլի ութ հաղթողները: Եզրափակիչ անցնող չորս մասնակիցները պետք է խաղային 11 միավորով երեքական խաղ: Սակայն հաղթողի կոչումը ստանալու համար կանոնները բարդանում էին. հարկ եղավ խաղալ ինը պարտիա՝ յուրաքանչյուրը մինչև 21 միավոր (մոտ 90 րոպե), որպեսզի մեր տաղանդավոր խաղացող Ատոմ Դավթյանը վերջապես հաղթանակի հինգում և դառնա «Արարատ» հայկական միության կազմակերպած սեղանի թենիսի անդրանիկ մրցաշարի հաղթող: 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրեցին Կարեն Մխիթարյանն ու Արմեն Սահակյանը, որոնք պայքարեցին մինչև վերջ:

Մրցաշարից հետո տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, և բոլոր մասնակիցներն իրենց գոհունակությունն ու ցանկությունը հայտնեցին՝ միության շրջանակներում շարունակելու կազմակերպել նմանատիպ մարզական միջոցառումներ (վոլեյբոլ, ֆուտբոլ և այլն):

Ensuite les huit qualifiés du premier tour se sont confrontés le deuxième dimanche. Les quatre finalistes devaient réaliser un score d'au moins trois jeux de 11 points. Cependant, pour atteindre le titre de vainqueur, l'épreuve s'est durcie. Il a fallu jouer neuf parties de 21 points (environ 90 min) pour que notre talent Atom Davtyan atteigne enfin ces cinq manches gagnantes et devienne le champion du premier tournoi de tennis de table de l'association arménienne *Ararat*. Les 2^{e} et 3^{e} places ont été respectivement attribuées à Karen Mkhitaryan et Achot Sahakyan qui se sont battus jusqu'au bout.

La remise des prix a eu lieu à la fin du tournoi et tous les participants ont exprimé leur satisfaction et l'envie de continuer à participer à d'autres activités sportives de l'association (volley-ball, football…).

Ce premier tournoi sportif au sein de notre association a été un succès grâce à l'organisation et la participation active de 16 participants : Toros, Rasim, Achot, Hayk, Samvel, Hamlet, Armen, Atom, Edouard, Movses, Vardan, Karen Z., Garik, Karen M. et les deux benjamins Edouard et Vahan. Les femmes et les enfants présents lors de cette compétition ont exprimé leur envie de jouer également. Ces derniers, notamment les plus petits, se sont jetés sur les raquettes dès que les grands les ont lâchées. Nous avons donc fixé une autre date de tournoi de ping-pong féminin et enfants de 5 ans et plus dans les semaines qui ont suivies.

Il est connu que les activités sportives en groupe non seulement créent mais également renforcent les liens entre les personnes, ce qui a été aussi prouvé lors de ce tournoi de ping-pong de notre communauté. Il a été l'occasion pour certains de découvrir l'association. Nous allons donc continuer à organiser d'autres activités de ce type.

Karen Mkhitaryan

Remerciements

Un grand merci pour le soutien de M. Raveau, le Directeur de l'association *Caramel*, de nous avoir prêté ses tables de ping-pong sans lesquelles ce tournoi n'aurait pas eu lieu. Nous remercions également l'organisateur Karen Mkhitaryan et les membres de l'association *Ararat* qui l'ont aidé dans son organisation (Vardan, Garik, Hayk, Movses, Karen Z.). Enfin, tous nos remerciements aux participants et supporters de ce beau tournoi.

JOURNÉE DE PARTAGE DES CULTURES AU PARC DU BAROEUL

Début 2012, un appel à projet a été lancé lors d'une réunion du CESAM (association des associations de Mons en Baroeul) pour l'organisation de la manifestation « Les dimanches du Barœul ». Il s'agissait d'animer cinq dimanches de suite le parc du Baroeul pour les habitants de cette ville qui ne partaient pas en vacance. Avec l'association de la communauté grecque, le centre social *Imagine* et d'autres associations, *Ararat* a souhaité participer à une après-midi autour d'un échange culturel sur ce qui rapproche nos cultures, dont notamment la danse. Notre association a plusieurs fois organisé des démonstrations de danse, mais l'atelier de pratique de la danse arménienne ne fonctionnait plus depuis trois ans faute de professeur. Le but de l'action proposée était de reprendre ces cours afin de préparer le spectacle du 15 juillet et d'atteindre un public issu de notre association mais aussi, peut être, d'autres structures.

Quatorze cours de deux heures ont eu lieu, principalement les vendredis soirs de 18h30 à 20h30 au centre social *Imagine* de Mons en Barœul. Ces cours ont été donnés par Lusine Babikyan-Ghazaryan, ex-danseuse professionnelle de l'ensemble d'État *Krounk*, formée à Erevan au métier de professeur de danse. Dix-sept personnes âgées de 12 à 49 ans ont pratiqué ces cours dont huit assidument.

Մեր միության կազմակերպած այս մարզական անդրանիկ մրցաշարը հաջողվեց՝ շնորհիվ լավ կազմակերպման և ակտիվ մասնակցության: 16 մասնակիցներն էին Թորոսը, Ռասիմը, Աշոտը, Հայկը, Սամվելը, Համլետը, Արմենը, Ատոմը, Էդուարդը, Մովսեսը, Վարդանը, Զ. Կարենը, Գարիկը, Մ. Կարենը և մեր երկու պատանիները՝ Էդուարդը և Վահանը: Ներկա կանայք և երեխաները ցանկություն հայտնեցին նույնպես մասնակցելու գալիք խաղերին: Երեխաները, նամանավանդ ամենափոքրիկները, մրցաշարի ավարտից անմիջապես հետո իրենց ձեռքն առան թենիսի խաղաթիերը՝ խաղալու համար: Հաջորդ շաբաթների ընթացքում մենք նշանակեցինք սեղանի թենիսի մեկ այլ մրցաշարային օր՝ կանանց և հինգ տարեկանից բարձր երեխաների համար:

Հայտնի է, որ խմբակային մարզական միջոցառումները ոչ միայն ստեղծում, այլ նաև ամրապնդում են մարդկանց միջև կապերը. դա հաստատեց նաև մեր համայնքի կազմակերպած սեղանի թենիսի մրցաշարը: Ներկաներից մի քանիսի համար սա առիթ էր՝ ծանոթանալու լիահայ միության հետ: Ահա այս պատճառով էլ մենք որոշեցինք շարունակել կազմակերպել այս կարգի ուրիշ միջոցառումներ ևս:

Կարեն Միխիթարյան

Երախտիքի խոսք

Խորին շնորհակալությունն ենք հայտնում «Կարամել» միության նախագահ պարոն Ռավոյին՝ աջակցության և մեզ թենիսի սեղաններ տրամադրելու համար, առանց որի այս մրցաշարը տեղի չէր կարող ունենալ: Շնորհակալություն ենք հայտնում նաև Կարեն Միխիթարյանին՝ մրցումը կազմակերպելու և «Արարատ» միության անդամներ՝ Վարդանին, Գարիկին, Հայկին, Մովսեսին, Զ. Կարենին՝ ցուցաբերած ակտիվ օգնության համար: Շնորհակալություն նաև այս մրցաշարի բոլոր մասնակիցներին ու երկրպագուներին:

Les participants du tournoi — Մրցաշարի մասնակիցները

ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԸ՝ ԲԱՐՈԼԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ

2012 թ. սկզբին ՍԵԶԱՄ-ի (Մոնս ան Բարոլի միությունների միություն) ժողովներից մեկի ժամանակ հայտարարություն էր արվել «Բարոլի կիրակիները» միջոցառումների շարքի կազ-մակերպման վերաբերյալ: Խոսքը Բարոլի զբոսայգում իրար հաջորդող հինգ կիրակիների անցկացման մասին էր այն բնակիչների համար, ովքեր արձակուրդներին մնում են քաղաքում: «Արարատ»ը նախաձեռնեց մասնակցել հունական համայնքի, «Իմաժին» մշակույթի տան և այլ միությունների հետ օրվա երկրորդ կեսին անցկացվող մշակութային կապերի մերձեցմանը նվիրված միջոցառմանը, հատկապես պարարվեստի բնագավառում: Մեր միությունը բազմիցս կազմակերպել էր պարային ներկայացումներ, սակայն հայկական պարի խմբակը արդեն երեք տարի է, որ չէր գործում՝ պարուսույց չունենալու պատճառով: Մեր հետապնդած նպատակն էր վերսկսել պարի դասերը և կազմակերպել հուլիսի 15-ի միջոցառումը՝ ներգրավելով ոչ միայն մեր միության, այլ նաև ուրիշ կազմակերպությունների անդամներին:

Une danse a été principalement travaillée par les participants presque tous novices en la matière. Il s'agit du *Kotchari*. C'est la danse la plus représentative de l'Arménie, la plus ai-mée des Arméniens et la plus connue des étrangers. On en re-trouve des formes semblables chez des peuples voisins : Assy-riens, Azéris, Kurdes, Grecs, *etc*.

Cette danse symbolise en Arménie le voyage d'un petit groupe de personnes parties en pèlerinage. En fonction de la dureté de la route, le rythme est plus ou moins rapide. C'est une danse qui se pratique en se tenant par la taille ou les mains pour symboliser la force et la solidarité du peuple. L'animatrice Lusine Babikyan-Ghazaryan a bâti notre danse à partir de pas traditionnels qu'elle a adaptés à son goût et aux possibilités des danseurs. Parallèlement, nos benjamines Sona et Madeleine ont préparé la danse intitulée *Tavir* (la harpe), et Toros le *Chalakho*.

Les dernières semaines avant cette manifestation, les dames de l'association se sont mobilisées pour coudre les tabliers, les ceintures et les coiffes de nos costumes. Cela a animé nos permanences du dimanche dans les locaux de la rue Vincent de Paul.

Essayant d'oublier nos complexes, nous présentons le *Kotchari* sur la scène
Բեմի վրա ներկայացնում ենք «Քոչարին»՝ փորձելով մոռանալ մեր բարդույթները

Après avoir bien travaillé, essayant d'oublier nos complexes, nous (Alla, Louisette, Nariné, Nelly, Sona, Madeleine, Garik, Samvel, Movses, Toros, Vahan et Edouard), avons pu présenter, à plusieurs reprises, ces trois danses dans la journée du 15 juillet. Le public a été nombreux, plus de 300 personnes réparties sur la journée. Nous nous sommes produits sous des chapiteaux spécialement montés pour cette occasion, ce qui nous a bien protégé de la pluie diluvienne. Nous avons pu découvrir également la danse grecque et nous essayer à la salsa en compagnie de membres de la communauté colombienne.

En plus de la danse, notre association a pris la charge, ce 15 juillet, d'un barbecue pour 200 personnes. Nos hommes ont réussi à cuire le poulet et le porc sous des tentes pour se protéger de la pluie battante. Nos préparations ont été très appréciées par le public qui a pu également goûter des spécialités culinaires grecques.

Après les danses, a démarré une compétition de nardi pilotée par Karen Zakarian. Cette fois le tournoi n'a pas été arménien à 100 %. Deux personnes de la communauté grecque nous ont rejointes. Malgré leur détermination pour défendre leurs couleurs, la chance a été du côté des joueurs arméniens qui ont remporté les premières places. Des lots constitués de livres sur

Nariné, Nelli et Louisette — Նարինեն, Նելլին և Լուիզեթը

Մոնս ան Բարոլի «Իմաժին» մշակույթի տանը տեղի ունեցան երկու ժամ տևողությամբ 14 պարի դասեր, հիմնականում ուրբաթ երեկոները ժամը 18.30-20.30: Պարուսույցը Լուսինե Բաբիկյան-Ղազարյանն էր, ով նախկինում եղել է պրոֆեսիոնալ պարուհի պետական «Կռունկ» համույթում և ունի պարի դասատուի կրթություն: Այդ դասերին մասնակցեցին 12-49 տարեկան 17 մարդ, որոնցից միայն 8-ը՝ կանոնավոր ձևով:

Les participants presque tous novices en la matière travaillent sur *Kotchari*
Մասնակիցները, որոնց մեծ մասը սկսնակներ են, աշխատում են «Քոչարի»ի վրա

Մասնակիցները, որոնց մեծ մասը սկսնակներ էին, հիմնականում աշխատեցին մի պարի վրա: Դա «Քոչարի»ն էր՝ Հայաստանի ամենաներկայացուցչական, հայերի ամենասիրելի և արտասահմանցիներին ամենածանոթ պարը: Նմանատիպ պարեր կարելի է հանդիպել նաև հայերի հարևան ժողովուրդների՝ ասորիների, ադրբեջանցիների, հույների, քրդերի և այլոց մոտ:

«Քոչարի»ն Հայաստանում խորհրդանշում է փոքր խմբով մարդկանց ուխտագնացության մեկնելը: Տեմպի արագությունը կախված է ճանապարհի բարդությունից: Այս պարը պարում են գոտկատեղերից կամ ձեռքերից բռնելով, ինչը խորհրդանշում է ժողովրդի ուժն ու համերաշխությունը: Մեր պարուսույց ԼուսինեԲաբիկյան-Ղազարյանը, ըստ իր ճաշակի և ելնելով պարողների հնարավորություններից, վերամշակեց ավանդական քայլերը՝ ստեղծելով մի նոր պար: Զուգահեռաբար մեր ամենակրտսերներ Սոնան և Մադլենը կատարելագործեցին իրենց արդեն ծանոթ «Տավիղ» պարը, իսկ Թորոսը՝ «Շալախո»ն:

Այս միջոցառմանը նախորդող վերջին շաբաթների ընթացքում միության կանայք համախմբվեցին, որ մեր զգեստների համար կարեն գոգնոցներ, գոտիներ և թագ-գլխադիրներ: Սրանից մեր կիրակնօրյա մշտական հանդիպումները Վենսան դը Պոլ փողոցի վրա գտնվող կենտրոնում ավելի աշխուժացան:

Շատ ջանքեր թափելուց հետո, փորձելով մոռանալ մեր բարդույթները, մենք՝ Ալլան, Լուիզեթը, Նարինեն, Նելլին, Սոնան, Մադլենը, Գարիկը, Սամվելը, Մովսեսը, Թորոսը, Վահանը և Էդուարդը, կարողացանք հուլիսի 15-ի միջոցառմանը բազմիցս ներկայացնել մեր երեք պարերը հատուկ այս կապակցությամբ բացված մեծ վրանների տակ, որտեղ նաև պատսպարվեցինք հորդառատ անձրևից: Ամբողջ օրվա ընթացքում 300-ից ավելի մարդ հաճախեցին զբոսայգի: Հնարավորություն ունեցանք նաև ծանոթանալ մի քանի հունական պարերի հետ և փորձեցինք պարել սալսա՝ կոլումբիական համայնքի անդամների գլխավորությամբ:

Այս հուլիսի 15-ին պարից բացի մեր միությունը իր վրա էր վերցրել 200 մարդու համար խորոված պատրաստելու պա-

Toros, Madeleine, Sona et Samvel — Թորոսը, Մադլենը, Սոնան և Սամվելը

les cultures arménienne, grecque et turque les ont récompensés.

Les nombreux Arméniens présents ont pu découvrir ce grand espace vert de la ville de Mons en Baroeul et profiter des autres animations : chants avec orgue de Barbarie, fabrication d'instruments musicaux, livres en musique pour les tous petits, cuisson de sculptures au raku, balades en calèches et avec des ânes, *etc*.

Une finale enthousiaste / Խանդավառ ավարտ

Nous devons remercier les membres du Fonds de participation des habitants, la ville de Mons en Barœul et le Conseil régional du Nord-Pas-de-Calais qui ont accepté de subventionner les cours de danse qui nous ont permis de nous préparer pour la fête du 15 juillet. Ils ont permis de réduire de manière importante le coût des cours pour les participants. Le Centre social *Imagine* a mis gratuitement ses locaux à notre disposition et a porté le montage de la journée du 15 juillet avec nous et les autres associations. Les services municipaux ont eux mis en place tous les équipements nécessaires et ont géré une partie des animations qui se sont répétées les dimanches suivants.

Nous retiendrons de cette journée de partage des cultures beaucoup de fierté pour ce que nous avons réussi à produire ensemble et le plaisir de l'avoir partagé avec de nombreuses personnes. La poursuite des cours de danse est fortement souhaitée.

Louisette Lamarche

Atom et Alla, Rima et Movses   Ատոմն ու Ալլան և Ռիման ու Մովսեսը

տասխանատվությունը: Հորդ անձրևից պաշտպանող ծածկի տակ հայ տղամարդիկ հաջողությամբ խորովեցին հավի և խոզի միսը, որոնք բարձր գնահատականի արժանացան այցելուների կողմից: Վերջիններս հնարավորություն ունեցան նաև համտեսել հունական խոհանոցի ուտեստներ:

Պարերից հետո սկսվեց Կարեն Զաքարյանի կազմակերպած նարդու մրցաշարը, որն այս անգամ բացառապես հայերի մասնակցությամբ չէր, մեզ միացան հունական համայնքից երկու անդամ: Չնայած նրանց վճռականությանը պաշտպանել հույների «դրոշը», հաջողությունը հայ խաղացողների կողմն էր, որոնք էլ զբաղեցրեցին առաջին տեղերը: Հաղթողներին հանձնվեցին հուշանվերներ՝ հայկական, հունական և թուրքական մշակույթների մասին պատմող գրքեր:

Ներկա բազմաթիվ հայերի համար սա մի առիթ էր բացահայտելու Մոնս ան Բարոլ քաղաքի այս ընդարձակ կանաչ տարածքը: Նրանք նաև մասնակցեցին զանազան խմբակների՝ երգեհոնիկի, երաժշտական գործիքների արհեստանոցի, ամենափոքրիկների համար՝ երաժշտական գրքերի, ռակուից (ճապոնական խեցեգործության ձև) արձանիկների թրծման աշխատանքներին և ավանակալուծ կառքերով զբոսանքներին:

Պարի դասերը ֆինանսավորելու համար մենք պարտավոր ենք շնորհակալություն հայտնել Մոնս ան Բարոլ քաղաքի «Բնակիչների մասնակցության հիմնադրամ»ի անդամներին և Նորդ-Պա դե Կալեի Մարզային խորհրդին, որոնք մեզ հնարավորություն տվեցին նախապատրաստվել հուլիսի 15-ի տոնին: Մասնակիցների համար այս ֆինանսական օգնությունը զգալիորեն կրճատեց պարի դասերի վճարի գումարը: «Իմաժին» մշակույթի տունը անհատույց տրամադրեց պարի դահլիճը, մեր և ուրիշ միությունների հետ կազմակերպեց հուլիսի 15-ի օրը: Քաղաքային ծառայությունները տրամադրեցին բոլոր անհրաժեշտ սարքավորումները և կազմակերպեցին միջոցառումների մի մասը, որոնք կրկնվեցին հաջորդ կիրակիներին:

Մշակույթների հանդիպման օրը, երբ մեզ հաջողվեց միասին բեմ բարձրանալ և շատերի հետ կիսել այդ հաճույքը, կհիշվի հպարտությամբ: Մեզանից շատերն են ցանկանում, որ պարի դասերը շարունակվեն:

Լուիզեթ Լամարշ

Notre « coatch » Լըսինէ   Armen et Margar

Մեր պարուսույց Լուսինեն   Արմենն ու Մարգարը

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային կայք՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan
Corrections : Margarit Khatchatryan (arménien)

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝
Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի
Սրբագրություններ՝ Մարգարիտ Խաչատրյանի (հայերեն)

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ISN 2117-5772

ISN 2117-5772